№ 48 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՄԱՐՏԻ

1914

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՄԱՐՏԻ № 48

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.

Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.

Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը—85 կ.։
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» վէպերը։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՒԼԱԲԱՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ
Կախէթինսկայա փ. № 1, սեփ. տ.
Այսօր, չորեքշաբթի, մարտի 5-ին
Գ. ԻՓԷԿԵԱՆ
կը կարդայ հայերէն դասախօսութիւն
«Եւրոպական դիպլոմատիան եւ Թիւրքիայի ռեֆորմատորական փորձերը» թեմայով։
Սկիզբը երեկ. ժամը 8½-ին։
Հիւրերը՝ համաձայն ընդհանուր կանոնների։ առ. 192. 1—1

„Ս. Մ. ԿԻՐԱԿՕԶՕՎ եւ Բ. Գ. ՕԳԱՆՕՎ"
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ
(Արմեանսկի բազար, Մանթաշեանի գոստիննի դվորի ներսը № 39—40)
ՏԵԼԵՖՕՆ № 8—68.

Յայտնում է ի տեղեկութիւն պ. պ. գնողների, որ Թիֆլիսի իր պահեստում առաջիկայ գարնանային և ամառային սեզօնների համար ստացված են խոշոր քանակութեամբ զանազան տեսակի մօդային-մանուֆակտուրային ապրանքներ՝ ինչպէս ռուսական, նոյնպէս և արտասահմանեան յայտնի ֆիրմաների։

ԱՊՐԱՆՔԸ ԲԱՑ Է ԹՈՂՆՎՈՒՄ ՆԱԵՒ ԿՏՈՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ

ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ.
ՄԱՀՈՒԴԵՂԷՆ ՏԻՒԼԻ ԳՈՐԳԵՂԷՆ
ԲՐԴԵՂԷՆ ԲԱԹԱՆԵՂԷՆ ԵՒ ԱՅԼ
ՄԵՏԱՔՍԵՂԷՆ ԲԱՄԲԱԿԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ։ (կ.չ.) առ. 174. 3—2

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր. 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23, тел. 7—92.
(ա.օ.) առ. 977. 100—90

ԿԱՐՍՈՒՄ
Բժիշկ
Լ. Գ. Տէր-Գրիգորեանց
Մասնագէտ կանացի և վեներական հիւանդութիւնների, Միխայլովսկայա փող. տուն Շավերդեանի, նոտարի գրասենեակի մօտ, ԸՆԴՈՒՆՈՒՄ է երեկ. ժամը 5—6-ը։
(կ.հ.) առ. 190. 5—1

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։
Սրսկումն «606»-ի և «914»-ի։
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզաւէտինսկայա փ. № 39. տ. Զաքէթեանի։
(չ.ու.կ.) առ. 901. 100—49

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։
Ընդունելութիւն՝
Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Արաս-Արաղսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(կ.հ.կ.) առ. 679. 74—69

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Վերջին ժամանակներս գաւառներում սկսեցին հրատարակվել մի քանի թերթեր, որոնց առիթով թէ «Մշակի» և թէ այլ օրգանների մէջ արտայայտվեց այն կարծիքը, թէ գաւառական լրագիրը ամենից առաջ պէտք է զբաղվի տեղական խնդիրներով։

Այս կարծիքի դէմ առարկութիւններ արին վերջերս գաւառական թերթերը և խնդրին այն կերպարանքը տուին, որպէս թէ Թիֆլիսի մամուլը կամենում է խնամակալի դեր կատարել և խօսում է բարձրութեան, հովանաւորութեան հովեր առած։

Խնդիրը որքան վերաբերում է «Մըշակին»—ճիշդ չէ դրված։ «Մշակը» այն միտքն է յայտնել, այո, թէ գաւառական լրագիրը ամենից առաջ պէտք է զբաղվէ տեղական հարցերով, այսինքն լուսաբանէ, քննէ, վերլուծէ տեղական հարցերը, երեւոյթները, որովհետև նա անմիջապէս շփումն և կապ ունի տեղական կեանքի հետ։ Դրանով նա բնաւ չէ կամեցել ասել, թէ գաւառական թերթը չը պէտք է զբաղվէ ընդհանուր հարցերով, այլ միայն այն, որ նախամեծարութիւնը նա պէտք է տայ տեղական հարցերին և ապա արդէն զբաղվէ և երկրային, պետական, համաշխարհային հարցերով։

Ահա ձեզ մի թերթ, որ հրատարակվում է Ալէքսանդրոպոլ, կամ Երևան, կամ Շուշի քաղաքում։ Այդ երեք գաւառներում ևս տեղական ահագին հարցեր կան լուսաբանելու, մշակելու—տնտեսական, հողային, գիւղատնտեսական, կրթական, կուլտուրական։ Ի՞նչ դրութեան մէջ է գտնվում գիւղացիների հողատիրութեան խնդիրը, ի՞նչ յարաբերութիւններ և պարտականութիւններ ունի գիւղացին դէպի հողատէրը, արդիւնաբերական ի՞նչ ձեռնարկութիւններ կան, քանի՞ և ի՞նչ տեսակ դպրոցներ կա՞ն, կա՞ն արդեօք կօոպերատիւ, սպառողական, մանր վարկի ընկերութիւններ, խնայողական գանձարաններ, ի՞նչ դրութեան մէջ է գտնվում ուսուցման հարցը, ինչպիսի գործունէութիւն ունեն քաղաքային ինքնավարութիւնները, ի՞նչ ապրանք և բերք է արտադրում գաւառը, ո՞ւր է արտահանվում, ի՞նչ ապրանք և բերք են ներմուծվում օտար տեղերից—ահա մի շարք հարցեր, պատահմամբ մեր միտքն եկած, որ արձանագրում ենք այստեղ և որոնք պէտք է դառնան գաւառական թերթի քննութեան և լուսաբանութեան առարկայ։ Բայց եթէ գաւառական թերթը, որ ունի գուցէ մի ջուխտ մի կէսն ընթերցող, մի կողմ թողնէ գաւառական հարցերը և «բարձր հովեր» առնելով զբաղվէ այն հարցերով, որոնցով զբաղվում են և մայրաքաղաքի թերթերը, դրանով նա ոչ մի օգուտ բերել չէ կարող ժողովրդին, նախ, որովհետև, գաւառական թերթը իր սուղ միջոցներով անկարող է տալ տեղեկութիւնների այնպիսի առատ պաշար ընդհանուր և քաղաքական հարցերի մասին, ինչպէս կենտրոնական մամուլը, երկրորդ, որովհետև տեղական ընթերցողը իր տեղական հարցերի լուսաբանութեան համար ստիպված կը լինի դարձեալ դիմել կենտրոնական մամուլի օրգաններին։

Այո, գաւառական մամուլը պէտք է լինի անկախ և ինքնուրոյն, բայց դա չէ նշանակում, թէ նա պէտք է թողնէ տեղական գաւառական հարցերը և զբաղվէ ընդհանուր հարցերով։ Եթէ նա կարողանայ ցոլացնել գաւառի կեանքը ճշգութեամբ, ցոյց տայ այն հիմնական պատճառները, որոնք խոչընդոտ են հանդիսանում գաւառի բարգաւաճման, երևան հանէ, մերկացնէ գաւառի ժողովուրդը կրծող, մաշող վէրքերը՝ դրանով նա անգին ծառայութիւն մատուցած կը լինի թէ ժողովրդին և թէ կենտրոնական մամուլին, որ կը կարողանայ օգտվել այդ նիւթերից։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԷՏԱԲԵՐ ՓՈԹՈՐԻԿՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

3 մարտի

ԵՅՍԿ (ուշացած).—Փետր. 28-ին սկսեց փչել ուժեղ քամի և կէս գիշերին փոխվեց կատաղի ուրագանի։ Ամենուրեք ցանկապատները պոկվեցին, թիթեղեայ տանիքները տարվում էին օդում։ Ծովափով անկարելի էր անցնել։ Ալիքները մոլեգին յորձանքով մղվեցին դէպի ցամաք։ Հրդեհաշէջների խումբը սկսեց հեռացնել մօտակայ խրճիթներում բնակվողներին։ Քաղաքում շատ շինութիւն քանդվել են։ Եկեղեցիներից խաչերը պոկված են։ Փողոցներում թափթփված են ցուցանակներ, աղիւսի կտորներ և այլն։ Քաղաքի արուարձաններում քամին ցիրուցան է արել խոտի դեզերը։ Նաւահանգստում շատ նաւակներ ջարդված են։ Հացի պահեստատեղիների տանիքները տեղահան են եղել, քամին քշել է հացահատիկը։ Վնասները միլիոններ են հասնում։

ՑԱՐԻՑԻՆ.—Փոթորիկից խզված հեռագրական հաղորդակցութիւնը վերականգնվեց ամբողջ գծի վրա։

ԲԱԹՈՒՄ.—Զիմնախան փոթորիկը շարունակվեց երկու օր։ Ծովային մրրիկը շարունակվում է։ Անատոլական ափերից կազմվեց հոսանք իւրաքանչիւր ժամ 4 մղոն արագութեամբ։ Լեռներում իջել է առատ ձիւն։

ԹԵՈԴՈՍԻԱ.—Երեք օր շարունակվող ուրագանը դադարեց։ Եղանակը տաք է, արեւային։ Նաւագնացութիւնը սկսվեց։

ԼՕՆԴՕՆ.—Շաբաթ օրից անգլիական ջրերում փոթորիկ է։ Ծովի վրա շատ դժբաղդ դէպքեր են։ Մօտակայ տեղերի տանիքները պոկվել են, շատ շինութիւններ քանդվել են։ Հարաւային Անգլիայում ջրերը դուրս են եկել ափերից։ Թեմզայի և Լիի հովիտները հեղեղված են։

ԿԵՐՉ.—Ծովային փոթորիկ է։

ԽԱՐԿՕՎ.—Ուրագանի պատճառով խզված հեռագիրը սկսեց գործել հարաւային քաղաքների և Ղրիմի հետ։

ՆՈՎՈՉԵՐԿԱՍԿ.—Փետրվարի 28-ի ուրագանը Դոնի հովտում մեծ աւերածութիւններ գործեց։ Կագալնիկում զոհվեցին մի քանի մարդ, Կրուգլի գիւղում և Գոսուգաբևա Խուտորում պակասում են շատ բնակիչներ, որոնք մեկնել էին ձկնորսութեան։ Ջրի յորձանքները հասնում էին շատ հեռու, ծածկելով ճանապարհին հանդիպածը։ Շատ ձկնորսական նաւակներ, մանր շինութիւններ, անասուններ, քշվել, տարվել են ջրից։ Կոնստանտինօվսկայա ստանիցայում խեղդվել են 5 մարդ։

ՍՏԱՒՐՕՊՕԼ.—Փետրվարի 28-ի ուրագանը նահանգում պատճառեց միլիօնաւոր վնասներ։ Հրդեհը լափել է հարիւրաւոր տներ, բազմաթիւ անասուն։ Ալէքսանդրովսկ գիւղում կրակին զոհվել են 2 կին և 2 երեխայ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

3 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ցարսկոյէ-Սելօյի պալատում ներկայացաւ Թագաւոր Կայսրին և յանձնեց իր հաւատարմագրերը սպանական դեսպան մարկիզ Դելլա-Պուէրտան։ Միևնոյն օրը դեսպանը ներկայացաւ Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնային։

Բիւջէտային մասնաժողովն ընդունեց ներքին գործերի մինիստրութեան նախահաշիւը։

Ժող. լուսաւորութեան մասնաժողովը հաւանութիւն տուեց ատամնաբուժական դըպրոցների օրինագծին և այդպիսիները ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեանը ենթարկելուն։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բացատրեց, որ դասատուներ նըշանակելիս պէտք է նախապատուութիւն տալ մասնագիտական մանկավարժութիւն անցած անձանց։

Կայսերական Էրմիտաժի թատրոնում Բարձրագոյն ներկայութեամբ ներկայացվեց Վագների դրամա-միստերիա «Պարսիֆալը»։

ՄԻՆՍԿ.—Մօզըրի գ. Լէյօսի և Ժաուլի հասարակութիւնները, տեսնելով հասարակութեան մէջ օրէ-օր տարածվող խուլիգանութիւնը և արբեցողութիւնը, որոշել են համախոսականներով փակել արքունի ու մասնաւոր գինետները։

ԼՕՆԴՕՆ.—Ուէլսի պրինցը մեկնեց Կոպենհագեն, որտեղից անցնելու է Խրիստիանիա։

«Թայմսը» որ այսօր առաջին անգամ վաճառվեց հատը մի պենսով, առաջնորդող յօդուածում քննում է գերմանական մամուլի ագրեսիվ տոնը Ռուսաստանի վերաբերութեամբ և գտնում է, որ գերմանական մամուլի արշաւանքը ընդդէմ Ռուսաստանի իր պտուղները տուեց, որոնցից մէկը հանդիսանում է դումայական խորհրդակցութեան վճիռը մինիստրների կաբինէտի հետ միասին ուժեղացնելու Ռուսաստանի մըշտական զօրքը։ Ռուսաստանի դէմ նախազգուշական պատերազմ առաջարկվել է դեռ շատ առաջ, բայց դատապարտվեց նոյնիսկ Բիսմարկից։ Այդօրինակ արշաւանքի վերսկսելը մանաւանդ նշանակալից է ներկայ կանցլերի օրով, որի պաշտօնավարութեամբ գերմանական մամուլը սովորաբար խուսափում է շովինիստական յարձակումներից։ Արշաւանքի պատճառները յայտնի չեն, բայց եթէ նա արգասիք է Ռուսաստանին վախեցնելու ցանկութեան, նպատակին չէ հասել. վախեցնել միայն կարելի է ամենաթոյլին։ Նախազգուշական պատերազմը՝ չափազանց կասկածելի ձեռնարկութիւն է։

ՀՌՕՄ.—Ստեֆանիէն Բեռլինից հեռագրում են, որ հակառակ «Դէյլի Տէլէգրաֆի» տեղեկութեան, եռեակ դաշնակցութեան պետութիւնները մտադիր չեն առանձին-առանձին գործել Եպիրոսի հարցում, որի նկատմամբ, բարեբաղդաբար, բոլոր մեծ պետութիւնները լիակատար համաձայնութեան մէջ են։

Կ. ՊՕԼԻՍ.—Վակուֆների մինիստրութիւնը վերածվեց գլխաւոր վարչութեան, որ ենթարկվելու է շէյխ-ուլ-իսլամին։ Վակուֆների նախկին մինիստր Խայրէդդին-բէյը նշանակվեց շէյխ-ուլ-իսլամ։

ՓԱՐԻԶ.—Ֆինանսների մինիստր Կայօյի կինը «Ֆիգարօյի» խմբագրատանը մի քանի անգամ կրակեց գլխաւոր խմբագիր Կալմէտի վրա և ծանր վիրաւորեց նրան։

ՏՕԿԻՕ.—Ակիտում երկրաշարժը քանդել է 350 տուն, սպանվել են 60 մարդ։ Համքեբում փլատակների տակ մնացած 300 բանւորի վիճակը յայտնի չէ։ Երկաթուղին չէ երթևեկում։

Ծովակալ Տօգօյի նախագահութեամբ հաստատվեց մի մասնաժողով, որ հոգալու է ժառանգի խնդրի մասին։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Կայացան բազմամարդ սօցիալիստական և ուսանողական ցոյցեր։ Մի քանի խանութներում պատուհանների ապակիները ջարդվեցին։ Տեղի ունեցան 8 ձերբակալութիւններ։

ՏՐԻԵՍՏ.—Իտալացի և հարաւ-սլաւօն ուսանողների ընդհարման պատճառով փակվեց բարձրագոյն առևտրական ինստիտուտը։

ՎԻԷՆՆԱ.—Դուրրացօյից հաղորդում են, որ ալբանական մինիստրներ են նշանակվել. մինիստր-նախագահ Տուրխան-փաշայ, զինւորական՝ Էսադ-փաշայ, ներքին գործերի՝ Մեխտի-բէյ, հասարակական աշխատանքների՝ Հասան-բէյ, ժողովրդական լուսաւորութեան՝ Ստեփան Զուրանի, ֆինանսների՝ Սիրխա-բէյ, երկրագործութեան՝ Իւրտուլի։

Գերմանացի և չեխ պատգամաւորների խորհրդակցութիւնը պառլամենտի աշխատանքի ընդունակութիւնը վերականգնելու հարցի առիթով համաձայնութեան չը յանգեց։ Կայսերական հրովարտակով ռէյխսրատի նստաշրջանը յետաձգվեց։

Քրօջը այցելելու եկած սակսոնական թագաւորն այցելեց կայսրին ½ ժամով։ Մի ժամ յետոյ կայսրը փոխ-այցելութիւն գործեց։ Երեկոյեան Շէնբրունի պալատում տեղի ունեցաւ պաշտօնական ճաշ, որին ի թիւս դիպլոմատների ներկայ էին ռուսական, գերմանական և սպանական դեսպանները։

Շատ հարաւ-սլաւօնական քաղաքներում Տրիեստի առևտրական ինստիտուտի դէպքերի առիթով կայացել են ցոյցեր, ուղղըված իտալացիների դէմ։ Զագրեբում ուսանողների ամբոխը ազգային երգեր երգելով ցոյց է կազմել իտալական հիւպատոսարանի առաջ և քարեր է նետել հիւպատոսատուն։

ԽԱՐԿՕՎ.—Զեմստվային ժողովն անհրաժեշտ գտաւ հիմնել Խարկովում բարձր գիւղատնտեսական դասընթացքներ։

ԲԻՐՄԻՆՀԱՄ.—Սուֆրաժիստուհիները հըրդեհեցին մեծ թւով երկաթուղային վագոններ. վնասները 1000 ֆունտից աւելի են։

ԲԵՐԼԻՆ.—Հաստատվեց գերմանական-չինական ընկերութիւնը Գերմանիայի տնտեսական յարաբերութիւնները Չինաստանի հետ զարգացնելու համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋԵԿՈՒՑՈՒՄ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԵՒ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻՆ

Կովկասի փոխարքան Կուբանի շրջանի կառավարչից ստացել է հետեւեալ հեռագիրը.

«Փետրվարի 28 ի գիշերը, ժամը 4-ին, հիւսիսային ուրագանից առաջացած չը տեսնուած ծովային յորձանքը ծածկեց Ազովեան ծովի առափնեայ վայրերը Եյսկ քաղաքից սկսած մինչեւ Կերչինսկի ջրանցքը. 10 ժամից յետոյ ջուրը կամաց-կամաց յետ քաշվեց՝ թողնելով սարսափելի աւերածութիւններ ծովեզրեայ քաղաքներում, ստանիցաներում եւ բազմաթիւ ձկնորսարաններում։ Մարդկային զոհերը հաշւում են հարիւրներով։ Մարդկային զոհերի եւ նիւթական վնասների քանակը որոշելը անհնար է մինչեւ վնասված տեղերից մանրամասն տեղեկութիւններ ստանալը։ Հեռագրային եւ հեռախօսային հաղորդակցութեան ընդհատման պատճառով, ամենից շատ վնասված վայրերից (Պրիմորսկի-Ախտարսկի ստանիցայից) տեղեկութիւններ կը ստացվեն միայն հետեւեալ օրը, մարդկանց միջոցով։ Գեներալ-լէյտենանտ Բաբիչ»։

Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկով Թագաւոր Կայսեր ուղղել է մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ. «Ցարսկոյէ-Սէլօ. Նորին Կայսերական Մեծութեան.—Ամենահպատակօրէն յայտնում եմ. Կուբանի շրջանի կառավարիչը հեռագրում է, որ փետրվարի 28-ին, սաստիկ ուրագանի ժամանակ, ծովի յորձանքը հեղեղել է Եյսկից մինչեւ Կերչինսկի ջրանցքը եղած տեղերը եւ ահագին վնասներ է հասցրել։ Կան հարիւրաւոր մարդկային զոհեր։ Գեներալ Բաբիչը ժամանել է դժբաղդութեան վայրը. Նրան հրամայված է անմիջապէս կազմակերպել բժշկական, սանիտարական, նպաստի եւ բնակարանային օգնութիւն վնասված ազգաբնակութեան համար, միջոցներ ձեռք առնել կարգը պահպանելու եւ յայտնել ինձ դրամական եւ այլ օգնութեան չափի մասին, որ իմ կարգադրութեանն են սպասում։ Գեներալ-ադիւտանտ կոմս Վորոնցով-Դաշկով»։ («Кавк.»)

ՓՈԽԱՐՔԱՅԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Շաբաթ, մարտի 1-ին, փոխարքայի օգնական Ն. Լ. Պետերսոնի նախագահութեամբ կայացաւ փոխարքայի խորհրդի նիստը, որը նուիրված էր փոխարքայի կողմից Պետական Դումային ներկայացվելիք պոլիտեխնիկումի ծրագրի քննութեան։ Խորհրդի նիստին բացի նրա մշտական անդամներից, մասնակցում էին պոլիտեխնիկումը կառուցանող գլխաւոր կոմիտէի յանձնաժողովների նախագահները, Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլուխ իշխ. Կ. Ն. Աբխազի եւ գլխաւոր կոմիտէի գործավար իշխ. Գ. Մ. Թումանեան։ Ապագայ պոլիտեխնիկումի կառուցման ծախք հաշւում են 2.633,370 ռուբ., Նրան կահաւորելու համար 696,000 ռուբ., իսկ իւրաքանչիւր տարի չորս բաժանմունքը (գիւղատնտեսական, քիմիական, մեխանիկական եւ տնտեսական) պահելու համար կը ծախսվի 628,350 ռուբլի։ Բոլոր ծախքերը հաշւում են տեղական միջոցներից, առանց գանձարանից նպաստ ստանալու։ Ծրագիրը մի քանի աննշան փոփոխութիւններով ընդունվեց խորհրդի կողմից։

Պ. Պ. ՍԵՄԵՆՈՎ-ՏԵԱՆՇԱՆՍԿԻ

Պետերբուրգում նորերս վախճանվեց 88 տարեկան հասակում Պետր Պետրովիչ Սեմենով, Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան փոխ-նախագահը, մի նշանաւոր գիտնական, հասարակական եւ պետական գործիչ, որին տուել էին Տեան-Շանսկի մականունը, կապելու համար նրա գործունէութիւնը Տեան-Շանի հետ, որի առաջին ուսումնասիրողն եղաւ 1856—58 թւականներին։

Նա ոչ միայն նշանաւոր աշխարհագրագէտ էր եւ վիճակագրող, այլ եւ նշանաւոր էնտոմոլոգ (միջատաբան) եւ վերջին 14 տարին ռուսաց էնտոմոլոգիական ընկերութեան նախագահն էր։ Աշխարհագրական Ընկերութեան մէջ նա գործում էր իբրեւ փոխ-նախագահ 1873 թւից ի վեր։

Նա ծնվել է 1827 թ. եւ նրա մանկութիւնը անցել է գիւղում։ Սկզբում նուիրեց իրան զինւորական ծառայութեան, բայց իւնկէր դառնալուց յետոյ՝ նա մտաւ Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտէտը եւ, աւարտելով, 1850 թ. պաշտպանեց դիսսերտացիա եւ բուսաբանութեան մագիստրի տիտղոսն ստացաւ։ Ապա նա ձեռնարկեց գիտական արշաւանքներ. նա առաջինը մտաւ Տեան-Շանի լեռնաշղթայի անմատչելի խորութեան մէջ, եւ նրան հետեւեցին Պրժէվալսկին, Գրում Գրժիմայլօն եւ այլք։ Այդ արշաւանքը նա կատարեց 1856—58 թ. եւ այդ ժամանակ արդէն նա հռչակվեց իբրեւ աչքի ընկնող համաշխարհային աշխարհագրագէտ-ուսումնասիրող։ Նրա գիտական հետազօտութիւնները Ալտայի, Տարբագատայի, Տեան-Շանի բնութեան մասին կատարվեցին 50-ական թւականներին, իսկ նրա «Աշխարհագրական-վիճակագրական Բառարան Ռուսաց Կայսրութեան» նշանաւոր ցեղգ-հատորեան աշխատութիւնը սկսվելով 1863 թ. աւարտվել է 1885 թ.։ Վիճակագրութեան ասպարէզում նա ամենախոշոր ծառայութիւններ մատուցեց իր կազմակերպչական տաղանդով։

Ամբողջ 33 տարի, նա, իբրեւ նախագահ այն կենտրոնական կոմիտէի, որ վարում է կայսրութեան վիճակագրութեան գործը, կռիւ մղեց այն հայեացքի դէմ, թէ վիճակագրութիւնը ապարդիւն գործ է, հանդիսացաւ նախաձեռնող եւ իրական ղեկավար կայսրութեան ազգաբնակութեան առաջին ընդհանուր միօրեայ ցուցակագրութեան 1897 թւին։

Նա խոշոր մասնակցութիւն է ունեցել 1861 թ. գիւղացիական ազատագրական ռէֆօրմի պատրաստութեան մէջ, իբրեւ աջակից Ռոստովցեվի։

Իր մատուցած խոշոր ծառայութիւնների համար, Սեմենով 1882 թ. նշանակվեց սենատոր, իսկ 1897 թ. անդամ Պետական Խորհրդի։ Նա պատւաւոր անդամ էր Ռուսաց Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան, Գիտութիւնների Ակադեմիայի եւ բազմաթիւ այլ գիտնական հիմնարկութիւնների Ռուսաստանի եւ արտասահմանի։

Լօնդօնի Աշխարհագրական Ընկերութիւնը տուեց նրան ոսկէ մէդալ, իսկ Բեռլինի Աշխարհագրական Ընկ.՝ Կարլ Ռիտէրի մէդալը։ Նրա անունով են կոչվում երեք լեռնաշղթաներ։ Նա ջերմ մասնակցութիւն ունէր եւ բարեգործական ընկերութիւնների մէջ։

Նա թողել է մի օրագիր, բաղկացած մօտ 1000 էջերից, որ պատմական մեծ շահեկանութիւն է ներկայացնում։

Յարգանք եւ պատիւ այդպիսի մեծ գիտնականին։

Քաղելով այս տեղեկութիւնները ռուս թերթերից, անօգուտ չեմ համարում կցել, որ մի քանի տարի առաջ, երբ ես Պետերբուրգ գնալով, իբրեւ անդամ Կայսերական Ռուսաց Աշխարհագրական Ընկ., կարդացի Ընկերութեան նիստերից մէկում ռեֆերատ հայր Ղեւոնդ Ալիշանի նշանաւոր երեք աշխատութիւնների («Սիսուան», «Այրարատ» եւ «Սիսական») մասին, Պ. Սեմենով, որ ներկայ էր դասախօսութեանս, սաստիկ հետաքրքրվեց այդ աշխատութիւններով եւ ասաց. «Արդեօք հնարաւորութիւն չը կա՞յ գէթ դրանց աշխարհագրական մասերը թարգմանել ռուսերէն, որպիսի ճոխ գանձ Արեւելքի ուսումնասիրութեան համար»։

Հ. Ա.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

(Մարտի 3-ի նիստը)

Դումայի հերթական նիստը բացվեց իշխ. Ալ. Միք. Արղութեան-Երկայնաբազուկի նախագահութեամբ։

Ներկայ են մօտ 45 իրաւասուներ։

Նախորդ նիստի արձանագրութիւնը հաստատելուց յետոյ, նախագահը տեղեկացնում է պոլիտեխնիկումի առթիւ փոխարքայի խորհրդի մէջ կայացած խորհրդակցութեան արդիւնքը, որ լրագիրներից արդէն յայտնի է հասարակութեանը։

Դրանից յետոյ ձայնաւոր Կէյլ հարցապնդում է անում քաղաքային հիւանդանոցում պատահած մի դէպքի մասին՝ մեղադրելով բժ. Տէր-Ներսէսովին, որ ժամանակից վաղ արձակել է հիւանդանոցից դեռ եւս չառողջացած մի հիւանդ կնոջ։ Բժ. Վեսելովզորով առարկելով Կէյլին միանգամայն անհիմն է համարում թէ մեղադրանքը եւ թէ հարցապնդումը։

Բժ. Լունկէվիչ եւս գտնում է միանգամայն հիմնաւոր բժ. Տէր-Ներսէսեանի վարմունքը։ Հարցը համարվում է սպառված եւ բժ. Տէր-Ներսէսեանի վարմունքը օրինական։

Հարցապնդումից յետոյ քննվում են վարչութեան զեկուցումները, որոնք համարեա բոլորն էլ ընդունվում են։

Փոքր ինչ թեր ու դէմ վէճեր է առաջացնում Աւճալայի ջրմուղու շոգեշարժները դիզելներով փոխարինելու հարցը։

Որովհետեւ ոչ մի ծախք չէ պահանջում այդ փոփոխութիւնը այժմ, եւ դիզելները համարում են աւելի արժան նստող, ուստի դուման ընդունում է այդ զեկուցումը։

Ապա քննվում են քաղաքային Շիօյեվեան տան փլուածքից վնասվածներին վարձատրութիւն տալու հարցը։

Վրաց գիրասան Վիկտոր Մախարաձէի համար ընդունվում է միանուագ 7000 ր. տալու առաջարկը։

Արտեմ Դանիէլեանի ընտանիքին որոշվում է տալ 25,000 ր. 5 տարվայ ընթացքում, տարեկան 5000-ական ռուբլի եւ ապա 4% փողին, հաշւելով ներկայ տարվանից։

Հարցերը առհասարակ քննվում են շտապշտապ։

Վերջում տեղի է ունենում ընտրութիւն դումայի կողմից Ժողովրդական Տան մասնաժողովի անդամի համար։

Աշխատակից

«ԱՆՆԱՄՈՒՍ» ՄԱՐԴԻԿ

«Մշակի» № 18-ում Աստ. Վարդանեանը մի ուշագրաւ յօդուածում—«Վերջապէս ամօթ է»—նորից բողոքում է այն երախտամոռ պարոնների արարմունքի դէմ, որոնք իրանց ուսանողութեան տարիներում օգտվել են Պետերբուրգի հայ ուսանողական բիւրոյից, ու այժմ լինելով անունի ու ըստ ամենայնի նիւթապէս ապահովված «աննամուսներ»՝ զլանում են իրանց պարտքը հատուցանել այն հաստատութեանը, որի շնորհիւ կարողացել են [illegible] շարքը դասվելու Յիշեալ յօդուածից երեւում է, որ Պետերբուրգի հայ ուսանողական բիւրոյում այժմ կան 1025 հոգու մուրհակներ՝ 30,000 ր. գումարի։

Այս բանը նոր չէ. տարիներ կարդում ենք շարունակ հայ պարբերական թերթերում, որ մեր ինտելիգէնտ կոչվող մարդիկ զլանում են իրանց պարտքերը հատուցանել ուսանողական կասսաներին, եւ, որ զարմանալին է, ամէն ժամանակ էլ ուսանողական բիւրօները միշտ սպառնալիքներ են կարդում, թէ դատի կը դիմեն, այս կամ այն միջոցների կը դիմեն… բայց էլ ոչինչ էլ չեն անում։

Մենք, որպէս հասարակութեան մի անդամ, առաջարկում ենք ուսանողական բիւրօներին, առանց այլ եւ այլի, առանց քաշվելու եւ յետաձգելու, այժմ եւ եթ հրատարակել բոլոր հայ եւ մի քանի ռուսաց լրագիրներում բոլոր այն հին ուսանողների անուններն ու ազգանունները, որոնք մինչեւ հիմա պարտ են ուսանողական արկղներին, եւ այն տեղեկութիւնները, որը ունեն բիւրօները նրանց մասին (որտեղից են, ինչ պաշտօնում եւ որտեղ են գտնվում այժմ), եւ ամեն մէկը մեզանից, ով որ փոքր ի շատէ յարգում է իր ազգը եւ ազգային [illegible] ունի, պէտք է օգնէ բիւրօներին եւ աշխատէ յիշեալ պարոններին թէ օրինաւոր, թէ ընկերական դատի ենթարկել տալ ու մի կերպ նրանց պարտքերը հաւաքել։ Առանց կարուկ միջոցների ոչ մի խրախուսանք, ոչ մի սպառնալիք նշանակութիւն չի ունենայ։

Գանձակ Յովս. Խօջայեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ծխական ժողով

Նուխի, 23 փետրվ.

Փետր. 23-ին քաղաքիս ս. Աստուածածին եկեղեցու գաւթում կայացաւ ծխ. ընդհ. ժողով։ Օրակարգի հարցն էր վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը երէցփոխի 1912 եւ 1913 թ. թ. հաշիւների ու գործունէութեան մասին։ Առաջին անգամն է մեզանում, որ վերաստ. յանձնախումբը հանդէս է գալիս ծխականներին բացատրութիւն տալու ծխ. հոգաբարձութեան եւ երէցփոխի գործունէութեան մասին։ Առաջինի նկատմամբ յանձնախմբի զեկուցումը տեղի է ունեցել 1913 թ. դեկ. 22-ին ծխ. ժողովում։ Յանձնախմբի զեկուցագրից երեւաց, որ երէցփոխը առանց ծխ. ժողովի համաձայնութեան իրաւունք չունէր ա) կատարել եկեղեցու գաւթի վերանորոգումը ծախսելով հարիւրներ, բ) պահել առանց աճեցման հարիւրից աւելի եկեղեցապատկան գումարը տարիներով խորունկ արկղում եւ այլն։

Ժողովականների գլխաւոր մասը համակրութեամբ ընդունելով գործունէութեան հարազատ պատկերացումը, ոմանք էլ առարկեցին զեկուցագրի խստութեան դէմ «եկեղեցու երէցփոխը ռոճիկ չէ ստանում» պատճառաբանութեամբ։

Վերաստուգիչ յանձնաժողովի վերջնական եզրակացութիւնը արտայայտվեց հետեւեալ բանաձեւով. «Ընդհանուր առմամբ երէցփոխի գործունէութիւնը չը համարելով անպարսաւ, սակայն ցոյց տուած դրամական օգտի պատճառով, յայտնում է շնորհակալութիւն»։

Մ. Գէորգեան

Ուսումն. գործը Շամախում

Շամախի, 28 փետրվարի

Այստեղ սպասւում է Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձու Ռուդոլֆի։ Տեղիս բէալական դպրոցի նիւթական աննախանձելի դրութիւնը տխուր հեռանկար է ներկայացնում։ Քաղաքն արդէն մի քանի հազար պարտք է մնացել դպրոցին, եւ դեռ հետըզհետէ բարդվում են դպրոցի պահպանութեան համար նորանոր պարտքերը։ Վերջապէս Ռուդոլֆի այցելութիւնից է կախված բէալականի գոյութեան շարունակութեան հարցը։

Քաղաքից մօտ 18 վերստ հեռու գտնվող Սաղեան գիւղում տեղացի մի խումբ գիտակից անձինք Բուդաղեան վանական դպրոցի ուս.-ուսուցիչ Աթաբէկեանի եւ տանուտէր Միսակ Մխիթարեանի աջակցութեամբ որոշել են առաջիկայ տարվանից ուսումը պարտադիր անել գիւղում։ Այժմեանից կազմվում է «Չքաւոր աշակերտների օգնող ընկերութիւն», որպէս զի ամենքին մատչելի լինի դպրոցը, որը պահպանվում է Բուդաղեանների հաշւով։

Մեծ քանակութեամբ մկներ են երեւացել դաշտերում, որոնք ոչնչացնում են աշնանացանը։ Այս մասին պաշտօնապէս տեղեկութիւններ են ստացվում դաշտերի շատ տեղերից։ Եթէ առաջը չառնվի օր առաջ, հետեւանքը սոսկալի է լինելու։

Օտարական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Լեւոն Մանթաշեան, որ վերջերս գտնվում է Թիֆլիսում, հետաքրքրվելով Ներսիսեան դպրոցի դրութեամբ, հրաւիրեց իր մօտ դպրոցի տեսուչ Յ. Խունունցին եւ հարցուփորձ արեց նրան դպրոցի տնտեսական մասի վերաբերութեամբ։ Դրանից յետոյ Լ. Մանթաշեան յօժարակամ ցանկութիւն յայտնեց նուիրել 20,000 ռուբլի դպրոցի կահաւորման համար։

◆ Մարտի 9-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում տեղի կունենայ Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերութեան տարեկան առաջին ընդհանուր ժողովը։ Կը քննվեն 1913 թ. հաշիւը եւ 1914 թ. նախահաշիւը, նոյնպէս եւ կը կատարվեն վարչութեան եւ վերաստուգող յանձնաժողովի անդամների ընտրութիւններ։

◆ Զանազան տեղերից դիմում են մեզ հարցմունքով, թէ ճշդէ՞ արդեօք այն լուրը, որ տպված է «Հորիզոն»-ի № 40-ում, թէ «հայ-կաթօլիկ հոգեւորականութիւնն ստացել է մի շրջաբերական, որով հրամայվում է բոլոր եկեղեցական-կրթական գործավարութիւնը, նոյնպէս եւ եկեղեցական արարողութիւնները կատարել լատիներէն, եւ որ այլեւս չը պէտք է կոչվեն հայ-կաթօլիկներ, այլ սոսկ կաթօլիկներ»։ Այդ առթիւ հարկ ենք համարում յայտնել, որ այդ լուրը զուրկ է որեւէ հիմքից եւ յաջորդ անգամ մենք կը տպենք Արդուինի հայ-կաթօլիկ հօտի կառավարիչ Կարապետ վ. Դիրլուգեանի հերքումը։

◆ Մարտի 1-ին, շաբաթ օրը, քաղ. վարչութեան վերաստուգիչ յանձնաժողովի մասնաժողովը Յովսէփ Խունունցի գլխաւորութեամբ վերաստուգութեան ենթարկեց քաղ. վարչութեան գանձարանը։ Ամեն ինչ կարգին գտնվեց։

◆ Կիրակի, մարտի 2-ին, Դիդուբէում տեղի ունեցաւ երեխաների 2-րդ ապաստարանի հիմնադրութիւնը, որը կառուցում է երեխաներին խնամող ընկերութիւնը։ Հանդէսին ներկայ էին փոխարքայի զինւորական մասի օգնական Ա. Զ. Միշլայեվսկի, ընկ. անդամները եւ այլ հրաւիրված անձինք։

◆ Քաղ. դումայի ուսումնարանական յանձնաժողովի նախագահ ընտրվեց Ի. Ս. Ալիխանեան։

◆ Ուրբաթ, մարտի 7-ին, հասարակական ակումբում կը տրվի ներկայացում։ Ակումբի սիրողները կը խաղան Սալովի յայտնի «Золотая рыбка»-ն ռուսերէն լեզուով։ Հետեւեալ, Մեծ-պասի չորրորդ շաբթին, ակումբում երեկոյթներ չեն լինի։

◆ Քաղ. վարչութիւնը մի առանձին յանձնաժողով է կազմել տեխնիկներից ինժ. Ս. Ա. Մուխաբրինսկու նախագահութեամբ, որը պէտք է դիտէ հին սպանդանոցի շէնքը եւ գնահատութեան ենթարկէ նրա նիւթերը։

◆ Ելեկտրաքարշին հսկող քաղ. վարչութեան յանձնաժողովի նախագահ է ընտրված իրաւաբան Մ. Ն. Վեսելովզորով։

◆ Բարձրագոյն դպրոցների ունկնդրուհիների օգտին կազմած երեկոյթը, որ տեղի ունեցաւ մարտի 2-ին, անցաւ կենդանի եւ ընդհանուր մուտք ունեցաւ 2000 ր.։

◆ Լուսանկարիչ Ս. Մինիկ 1913 թ. Վօլմարի ցուցահանդէսին մասնակցելով իր գերազանցապէս լաւ լուսանկարների համար արժանացել է ոսկէ մէդալի։

◆ Թիֆլիսի բորսային կոմիտէի քարտուղար երդ.-հաւ. Գ. Խատիսեան հրաժարվել է յիշեալ պաշտօնից։

◆ Մարտի 6-ին Ժողովրդական Տանը առաջին անգամ ներկայացվելու է Վ. Վարդանեանի «Տգիտութեան զոհեր» նոր ինքնուրոյն պիէսը, որի նիւթը վերցված է Թիֆլիսի գործարանական բանւորական կեանքից։

◆ Հայ Ազգագր. Ընկերութեան մշտական անդամ են գրվել տիկին Մարիամ Լազարեան եւ Թ. Խաչատրեան, վճարելով 50-ական ր.։

ԿՈՎԿԱՍ

◆ Քութայիսից մեզ գրում են. «Գարնանային երկար տաք ու պայծառ եղանակներից յետոյ՝ այսօր, մարտի 2-ին, Քութայիսում առատութեամբ ձիւն եկաւ եւ կանաչած գետինն ու ծաղիկները ծածկվեցին ձիւնի հաստ շերտով։ Փչում է հիւսիսային ցուրտ քամին։ Ձիւնը դեռ շարունակ գալիս է»։

◆ Փետրվարի 27-ին Բաքւում տեղի ունեցաւ քաղ. դումայի նիստը, որտեղ իրաւասու ինժ. Աշուրով մի նախատալից ճառ արտասանեց վարչութեանը ուղղված։ Նա մատնացոյց արեց եւ քաղաքագլխի անգործունէութեան վրայ։ Քաղաքագլուխ Բիչը այդ բանից նեղացաւ եւ ասաց. «Այստեղ բարեգործարան չէ. եթէ մենք աշխատանքի անընդունակ ենք, կը գնանք»։ Այս ասելով, նա հանեց շղթան եւ հեռացաւ։ Նրան հետեւեցին վարչութեան անդամները։ Նիստը ընդհատվեց։ Մի քանի իրաւասուներ համոզեցին քաղաքագլխին վերադառնալ։ Ընդմիջումին դումայի իրաւասուներ Սկոբելեվ եւ Հաջիեւ «կոմպլիմենտներ» փոխանակեցին իրարու հետ, միմեանց «աւանակ» անուանելով։

◆ Ալէքսանդրոպոլից մեզ գրում են, որ կիրակի, մարտի 2-ին, այնտեղ կայացել է բացումը տեղական օրրանոցի, որի հիմքը դրել էր այնտեղի հայ կանանց ընկերութիւնը։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Արդարադատութեան մինիստր Շչէգլօվիտովը գտաւ, որ մինչեւ այն ժամանակ, քանի կին-բժիշկները չեն նշանակվի դատաւորական, քաղաքային կամ ոստիկանական բժշկի պաշտօնում, դատական քննիչները չեն կարող հրաւիրել նրանց դատական-բժշկական հետազօտութեան համար, անտես անելով դատաւորական, քաղաքային եւ ոստիկանական բժիշկներին, այլ միայն այն դէպքերում, երբ պաշտօնական բժիշկները հիւանդութեան եւ այլ յարգելի պատճառներով չեն կարող գալ, քննիչը կարող է հրաւիրել [illegible] բժիշկների հետ [illegible] կին-բժիշկներին։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը մօտիկ ապագայում պատասխանելու է, թէ համաձայն է, արդեօք, նա՝ յանձն առնել մշակելու մի օրինագիծ պոռնկութեան վաւերացումը վերացման մասին։ Առաջ քան պաշտօնական պատասխան տալը, Ներքին գործերի մինիստրութիւնը, ըստ սովորականի, հարցրեց միւս մինիստրութիւնների կարծիքը։ Պատասխան ստացվեց արդարադատութեան, առեւտրի ու արդիւնաբերութեան եւ զինւորական մինիստրութիւններից։ Մինիստրութիւնների մեծ մասը տրամադրված է օրինագծի դէմ։ Զինւորական մինիստրութեան պատասխանի մէջ մասնաւորված է, որ պոռնկութիւնը վաւերացնելը հանդիսանում է որոշ չափով անհրաժեշտ միջոց զօրքի առողջութիւնը պահպանելու համար։ Ուստի եւ, զօրքերի մէջ վեներական հիւանդութիւններ չը զարգացնելու նպատակով, մինիստրութիւնը հնարաւոր չէ գտնում ոչնչացնել հասարակական տները, մանաւանդ որոնք գտնվում են զօրանոցներից ոչ հեռու։

◆ Պետ. Դումայում ներքին գործերի մինիստրութեան նախահաշւի քննութեան ժամանակ հանդէս է գալու ներքին գործերի մինիստր Մակլակովը որոշ ծրագրային ճառով, որ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, այնքան աջակողմեան է լինելու, որ նոյնիսկ առարկելու համար խօսելու է աջակողմեանների լիդէր Խվօստովը։

◆ Ներքին գործերի մինիստրի օգնական Լիկօշինի հրաժարականի լուրերը ճշդվում են։ Նա նշանակվում է Պետ. Խորհրդի անդամ։

◆ Մոսկվայի խուզարկու ոստիկանութեան պետ Կօշկօն նշանակվում է բոլոր խուզարկու հաստատութիւնների կառավարիչ։

◆ Մոսկվայի արհեստագիտական միութիւնները որոշել են հրատարակել սեփական գրական օրգան եւ խնդրել են Մաքսիմ Գորկուն յանձն առնելու նոր հրատարակութեան քաղաքական բաժինը։

◆ Մայրաքաղաքի թերթերում ամեն օր տպագրվում են յայտնի քաղաքական եւ հասարակական գործիչների կարծիքները գերմանական մամուլի սկսած յարձակումների առթիւ։ Ընդհանուր տիրող համոզմունքն այն է, որ չը պէտք է երկիւղ կրել գերմանական մամուլի ապարդիւն յարձակումից, որովհետեւ գերմանօ-ռուսաստան պատերազմ չէ լինելու մօտիկ ժամանակում։

◆ Ղարասուբազարից մեզ գրում են, որ փետր. 13-ին այնտեղի հայ գաղութը տօնել է Վարդանանց տօնը պատշաճ կերպով։ Նախ եկեղեցում հանդիսաւոր պատարագին երգել է Ա. Բաղդասարեանի պատրաստած քառաձայն խումբը, իսկ հ. Մեղրիկեան խօսել աւուր պատշաճի քարոզ։ Ապա կայացել է հոգեհանգիստ, որից յետոյ [illegible] տեղի է ունեցել աշակերտական հանդէս։ Ուսուցիչ Տ. Տէր-Մովսէսեան խօսել է օրվայ պատշաճ բանախօսութիւն։ Երգեցիկ խումբը մէջ ընդ մէջ երգել է ազգային եւ ժողովրդ. երգեր, իսկ աշ.-աշակերտուհիները արտասանել են ոտանաւորներ հայերէն եւ ռուսերէն։ Ի վերջոյ խաղացել են «Իշխան» մանկական վօդեվիլը։

◆ Քէրքից (Անդրկասպ. երկ.) եւս գրում են մեզ Վարդանանց տօնի մասին։ Այդ օրը այնտեղ շատ անշուք է անցել։ Տեղական հայ առեւտրականները տօնի նախորդ երեկոյեան ծխ. դպրոցի դահլիճում ժողովվել են եւ վճռել հետեւեալ օրը խանութները փակ պահել, բայց հէնց հետեւեալ օրն իսկ դրժել են իրանց կայացրած վճիռը։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ «Թեմի» շաբաթաթերթում «Գիւղացիների էկսկուրսիաներ» վերնագրով տպված մի յօդուածով Զափար-Բաճվելին կոչ է անում ցանկացող վրացի գիւղացիներին յայտնել իրանց այդ ցանկութեան մասին եւ գրվել այն խմբի մէջ, որ այս առաջիկայ գարնան կատարելու է մի ճանապարհորդութիւն Վրաստանի զանազան կողմերը ուսումնասիրելու եւ երկրի հետ տեղն ու տեղը ծանօթանալու նպատակով։ Այս առաջարկին համակրութեամբ միանում է եւ «Թեմի» խմբագրութիւնը։

◆ «Սիմ. Խմա» լրագրի ասելով՝ Քութայիսում փետրվարի 26-ին յայտարարված յայտնի գրականագէտ Ս. Եաբլօնովսկու դասախօսութիւնը չէ կայացել, որովհետեւ ծախսվել էր միմիայն 25 ր. տոմսակ։

◆ Լաղիձէ եւ ընկ. Թիֆլիսի լիմօնադի գործարանի բանւորները 18 կէտերից կազմված տնտեսական պահանջ են ներկայացրել գործարանատէրերին պատասխանի համար տալով նրանց երկու շաբաթվայ ժամանակամիջոց։

◆ Նահանգապետը թոյլ է տուել Ալ. Ցերցվաձէին եւ Լ. Ցագարելիին Քութայիսում հրատարակել վրացերէն օրաթերթեր՝ առաջինին «Ազրի» (Կարծիք), երկրորդին՝ «Գանախլէբա» (Նորոգութիւն) անուններով։

◆ Քութայիսում վրաց «Էրի» լրագիրը ընդմիշտ դադարել է լոյս տեսնելուց։

ԳԻՏՈՒԹ. ԳՐԱԿԱՆ. ԳԵՂԱՐ.

ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Բոլոր կրօնները պատուիրում են պաս պահել։ Եւ այդ՝ երեւի՝ նրա համար, որ կերակրից քրօնիկական թունաւորման երկիւղը ճանաչված է շատ վաղուց։ Ժամանակակից բժշկութիւնը գործադրում է բաւական յաճախ չորսօրեայ պահեցողութիւն։ Այդ առանձնապէս ընդունված է շաքարի հիւանդութեան ժամանակ։ Արդէն վաղուց սրտի հիւանդութիւնների ժամանակ արգելվում է խմիչքների շատ գործածութիւնը։ Շատ ողջամիտ մարդիկ 45—50 տարեկան հասնելուց յետոյ սկսում են պակասեցնել ընթրիքի չափը, բաւականանալով միայն բանջարեղէնով ու մրգով։ Նրանք իրանց շատ լաւ են զգում, եւ առաւել, որ այդ տեսակ դիէտը թոյլ է տալիս երբեմն դուրս գալ սովորական նորմայից։

Ժամանակակից պաս պահելը, ի հարկէ, հեռու է նրանից, որպիսին պատուիրագրում էին կրօնների հիմնադիրները։ Այժմ նա շուրջփակվում է գլխաւորապէս արգելելով կամ սահմանափակելով ուտելու մթերքները, որոնք թէև անհրաժեշտ են կեանքի համար, բայց շարունակ գործածելուց վերջ ի վերջոյ փչացնում են օրգանիզմը. յոգնեցնում են փայծաղը, գրգռում են երիկամունքները, բարձրացնում են արեան ճնշումը և գրգռում են սիրտը, առեղծելով սկլէրոզ, պաղագրա և այլն։ Այդ մշտական թունաւորումից ժամանակաւոր հանգստութիւնը կարող է միայն օգտակար լինել։

Իբրև ընդհանուր կանոն, պահեցողութեան ժամանակ ամենից լաւ է սննդվել ամենից պակաս թունաւորող մթերքներով։ Առաջին հերթին պէտք է դնել բանջարեղէնը։ Կասկածից դուրս է, որ խիստ վեգէտարիան ռէժիմը՝ բուսեղէնի, օսլա պարունակող բանջարեղէնի, մրգերի գործադրութեամբ ներկայանում է պահեցողութեանը համապատասխանող։

Կաթը քաղաքներում մարսում են միայն առողջ մարդիկ։ Բայց երբ աղիքները թոյլ են, նա գրգռում է առաջ բերում։

Ձուն նոյնպէս չէ կարելի խորհուրդ տալ ստամոքսի շատ հիւանդութիւնների դէպքերում։ Ձուկը թէև մսից աւելի մարսողական է, բայց մի քանի դէպքերում լաւ կը լինի բոլորովին հանել դիէտից։ Պասի համար աւելի յարմար է գետի կամ լճի ձուկը։

Յաճախ հիւանդները եկեղեցու թոյլտուութեամբ պաս չեն պահում։ Դա մեծ մոլորութիւն է։ Եթէ պաս պահելը օգտակար է առողջներին, նա աւելի անհրաժեշտ է հիւանդներին։ Միակ բացառութիւն կարելի է անել միմիայն սակաւարիւն երիտասարդների համար, որոնց սպառնում է թոքախտ։ Բոլոր մնացածներին պահեցողութիւնը օգտակար է կրօնական և առողջաբանական տեսակէտից։ Եթէ սրա վրա աւելացնենք և ալկօհօլ և ծխախոտ չը գործածելը, ինչպէս այդ ընդունված է Արևելքում, այն ժամանակ այդ տեսակ ծոմապահութիւնը կը լինի կատարեալ։ («Н. В.»)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արտիստական Թատրոն

Դերասան Բարատովի ղեկավարութեամբ գործող ռուսաց դրամատիկական խումբը իր դերասանների գեղեցիկ խաղով, լուրջ վերաբերմունքով դէպի բեմը և ներկայացրած աչքի պիէսներով գրաւել է հասարակութեան բուռն համակրութիւնը։ Այնպիսի դերասանուհիներ, ինչպէս տ. Ժիխարեվան, տ. Աստրովան, և այնպիսի դերասաններ, ինչպէս Պէտրվան, Բարատովը, Բորիսովը, իրանց տաղանդաւոր խաղով ցոյց են տալիս, որ մենք գործ ունենք առաջնակարգ արտիստների հետ։

Վերջին մի քանի ներկայացումների («Արծուիկ», «Ովկեանոսից անդր», «Կեանքի արժէքը») մէջ մանաւանդ փայլեցին վերոյիշեալ դերասանները և դերասանուհիները։ Տեղական թերթերից մինը նկատեց, թէ «Ովկեանոսից անդր» Գորդինի դրամայի մէջ հասարակութիւնը ներկայ էր ոչ թէ մի պիէսի, այլ մի համերգի, որի մէջ առաջին ջութակը հանդիսանում է տ. Ժիխարեվան։

Խորհուրդ ենք տալիս հայ հասարակութեան այցելել այդ ներկայացումները։

Հ. Ա.

Մ Ա Մ Ո Ւ Լ

Կ. Պոլսում հրատարակվող «Մեհեան» հանդէսի—որի երևումը ծանուցինք անցեալ անգամ—փետրվարի համարի մէջ Յակոբ Քիւֆէճեան զետեղել է մի քննադատական Վրթանէս Փափազեանի մասին։ Կարծիքը շատ աննպաստ է։ Քննադատի կարծիքով, Վ. Փափազեան մի անտաղանդ հաւաքող է (կօմպիլյատոր), որ վարակված է միայն էջեր լցնելու ախտով։

Խօսելով ապա Վ. Փափազեանի թիւրքահայ գրականութեան նուիրած պատմութեան մասին, հանդէսը կցում է.

Իր պատմութեան թիւրքահայ գրականութեան նուիրուած մասը տպաւորութիւնը կը թողու նորօրինակ րէկլամի մը՝ եղած ապուշ գիրքի մը համար, որուն անունն է «Հայ գրողներ» (Բ. մաս)։

Զգելէ առաջ այս տխուր գիրքը, պէտք կը զգամ լրջանալու։

Մենք, մեհենականներս, կը պահանջենք, որ մեր գրականութեան պատմութիւնը գրողները ունենան ամենէն առաջ խոր հասկացողութիւն ու մարզուածութիւն միջազգային գրականութեանց բոլոր երեսներուն, բոլոր անկիւններուն ու խորքերուն։

Պատմողը պատմող ըլլալէ առաջ պէտք է ըլլայ հոգեբան (ոչ ժընեվէն վկայեալ), նոյնքան ալ իմաստասէր։ Պէտք է ան հետազօտած ըլլայ հին ու նոր բոլոր արուեստի հրաշակերտներուն նկարագիրը, համեմատած ըլլայ հայ հոգին հոգիներուն հետ բոլոր այն ժողովուրդներուն, որոնց հետ ճակատագիրը դրած է զինքը նոյն արեւին տակ։

Մեր հին գրականութեան պատկառելի աւանդը թերի ու գուցէ անհասկնալի ալ մնայ, որքան ատեն որ կլեռիկական միստիկականութիւնը գիտական մեթոդներով չտարբաղադրուի, դուրս բերելու համար աւիշը, որ եկած է օտար կրօնքէ այնքան պարտադրուած ձևով մը մեր ներսը շրջան ընելու։

Մեր հին գրականութիւնը ոչինչ պիտի ըսէ բոլոր պատմողներուն, որքան ատեն որ ասոնք գոհանան թուղթերուն վկայութիւնով, այնքան ատեն, որ պատմողները զուրկ ըլլան երեւոյթները հալեցնելու, անցեալները ծծելու և վերարտադրելու մոգական գաղտնիքէն, որքան ատեն որ ցեղը ընդգրկելու, համառօտելու հանճարը պակսի իրենց։

Մեր նոր գրականութիւնը (իր երկու հատուածներուն մէջ) մեզի շատ մօտ ըլլալուն, միշտ ուժով պիտի ըլլայ մեր զգացումներուն վրայ ու մենք գիտական անկողմնակալութենէն պիտի շեղինք ընելու համար անմեղ շողոքորթութիւններ, պատիր ներբողներ ու թերևս նպաստաւոր գովեստներ, օրինակի համար... տիկին Թէոդիկի հացէին (որովհետև պ. Թէոդիկ շատ նպաստած է պ. Փափազեանին իր գործին մէջ)։

Միշտ հասարակ պատմողներ պիտի ըլլանք պ. Վրթանէս Փափազեանին պէս, երբ հոգեբանութեան տուփերը մոռացումի մէջ թողնենք, երբ զանոնք չկիրարկենք այն հրաշալի զանգուածին վրայ, որ Հայ-Ցեղ անունը կը կրէ։

Մեր պատմութիւնը իր եղերօրէն տխուր ու հասարակ երեսներովը դարձեալ սիրել կրցողին համար զմայլելի յիշատակարան մըն է։

Այս ցեղը լոյսէն, արեւէն է մեկներ. այս ցեղը քրիստոնէութիւն ըսուած ահաւոր մղձաւանջ մըն է կոխկռտեր։ Այս ցեղը իր հոգին գերի տալէն ետք, իր թագաւորներն ալ վատօրէն կրցեր է լքել, բայց ասոնց հետ մէկտեղ դարձեալ յայտնուեր է իր ստեղծումին ու իր հակումներուն մէջ բարձրօրէն սաւառնողը՝ բոլոր բաղդակից ցեղերուն մտաւոր մառացումին վրայ։

Մեր գրականութեան պատմութիւնը մեր երազին, մեր ոսկի երազին պատմութիւնն է։ Պ. Վրթանէս Փափազեանի նման զրբրիներ չեն, որ այդ նուրբ ու նուիրական պաշտօնին ընդունակ պիտի ըլլային։

Եթէ, արդարև, գրականութեան պատմութիւն գրողից դրվում է այդպիսի խիստ պահանջ, որ նա «ունենայ ամենից առաջ խոր հասկացողութիւն ու մարզուածութիւն (վարժութիւն) միջազգային գրականութեանց բոլոր երեսներուն, բոլոր անկիւններուն ու խորքերուն», այն ժամանակ պէտք է Լէօին էլ, որ չը գիտէ ոչ մի եւրոպական լեզու (բացի ռուսերէնից) և հետևաբար չունի վարժութիւն միջազգային գրականութեանց մէջ — դասել նոյնպէս Վ. Փափազեանի և նմանների շարքում։ Քիչ չեն մեր մէջ մարդիկ, որոնք նոյնիսկ հայկական հարցի պատմութիւններ են գրում, ծանօթ չը լինելով եւրոպական ոչ մի լեզուի հետ. սակայն բոլոր կարևոր դօկումենտները հայկական հարցի մասին ամփոփված են անգլիական կապոյտ, ֆրանսիական Դեղին գրքերի և անգլիական, գերմանական, ֆրանսիական պետութիւնների մէջ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 24 փետր.

«Մշակի» № 34-ի Նամակ խմբագրութեան բաժնում «Դիտող» ստորագրութեամբ մի նամակ լոյս տեսաւ Վերայի հանգստարանի ներկայ հոգաբարձութեան գործունէութեան առիթով։

Ճիշդ չէ նախ՝ որ ներկայ հոգաբարձութեան անդամներից—որ կազմված է հինգ հոգուց, այն է՝ գեներալ Ղորղանեան, բժշկ. Նաւասարդեան, Յ. Փիրալեան, Ալ. Միրիմանեան և տողերիս գրողը—երկուսը հեռացել են. ոչ մէկը չէ հեռացել։ Երկրորդ՝ Դիտողը ակնարկում է ինձ և գեներալ Ղորղանեանին, որ մենք երկուսով միայն անկոնտրոլ վարում ենք գերեզմանատան գործերը. այդ ևս բոլորովին սխալ է, որովհետև հանգստարանի գործերը կատարվել են միշտ հոգաբ. ժողովի որոշմամբ և ամէն տարի հաշիւ է տըվել հոգաբարձութիւնս իր պաշտօնի մէջ հաստատող հոգևոր իշխանութեանը։ Երրորդ՝ Դիտողը գրում է. «Ասում են, որ առաջնորդը գերեզմանատան հաշիւները առել է Ղորղանեանի ձեռքից, յանձնել է տէր-Նիկողայոս Բաւէեանին»։ Սա ևս չէ համապատասխանում իրողութեանը։ Հոգաբարձութեան կազմը ցայսօր մնում է անփոփոխ միայն գեներալի հիւանդութեան պատճառով, որ ներկայումս անկարող է որևէ գործ կատարել. մատեանների գործը վարում եմ ես, այլ ոչ Բաւէեանը, կամ հոգաբարձութեան կազմից դուրս մի այլ ոք։

Ես յատկապէս ինձ պաշտպանելու կարիք բնաւ չեմ զգում և չէի էլ պատասխանի յիշեալ նամակին, եթէ Դիտողի գրածները իրականութեանը համապատասխան լինէին, և նա չամբաստանէր մի վերին աստիճանի բարեխիղճ անձնաւորութեան, որ 17 տարուց աւելի ամենայն անձնուիրութեամբ աշխատել է յօգուտ Վերայի ս. Խաչ եկեղեցու և յիշեալ հանգստարանի, որին իր նախկին անվայելուչ, ոչ միայն Թիֆլիսի բազմահայ քաղաքի, այլև նոյն իսկ վերջին գիւղի համար, դրել է իր պաշտօնակիցների հետ միասին բարեկարգ դրութեան մէջ և պարսպապատել. և այսօր՝ երբ նա, գեներալ Ղորղանեանը, իր զառամեալ հասակի մէջ այնպիսի հիւանդութիւն է ստացել, որ այլ ևս ոչ մի գործի ընդունակ չէ, ինչպէս և իր պատիւը պաշտպանելու, վերկենալ և նրան վիրաւորել, այդ արդէն վայել չէ մի քրիստոնէի։

Յովհ. աւ. քհն. Մարտիրեան

Բագու, 1 մարտի

Խորհուրդը Հայոց Մարդասիրական Ընկերութեան յանուն ս. Գրիգոր Լուսաւորչի որոշելով տօնել Ընկերութեան 50-ամեայ յոբելեանը և այդ առիթով հրատարակել Ընկերութեան պատկերազարդ պատմութիւնը, խոնարհաբար խնդրում է այն բոլոր անձանց, որոնք ունեն իրանց մօտ նիւթեր Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան պատմութեան կամ հիմնադիրների և գործիչների վերաբերեալ, նմանապէս և վերջինների պատկերները, բարեհաճել ուղարկել խորհրդիս այդ նիւթերը և պատկերները, որ խորին շնորհակալութեամբ կը վերադարձվեն իրանց տէրերին օգտագործվելուց անմիջապէս յետոյ։

Հասցէ՝ Баку, Гимназическая, № 195, Совету Армянскаго Человѣколюбиваго О-ва.

Նախագահ՝ Հ. Տէր-Միքայէլեան

Ի տ. քարտուղարի՝ (Անընթեռնլի)

—

Գանձակ, 26 փետրվարի

«Մշակի» № 38-ում կարդացի, որ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը միջնորդութիւն է յարուցել բարձր իշխանութեան առաջ ժողովարութիւն անելու՝ Պեատիգորսկում հիմնըվելիք սանատօրիան պահելու համար, ուր պատսպարվելու են չունևոր ուսուցիչներ, վարժուհիներ և այլ հասարակական գործիչներ։ Ընկերութեան այդ վճիռն ու սկզբնական քայլը իմ սրտին մօտ ճանաչելով, յայտնում եմ խորին յարգանքս և համակրանքս նրա ղեկավարներին։

«Մշակի» թղթակիցը սանատօրիայի գործունէութիւնը «աւելի բեղմնաւոր և արդիւնաւէտ» դարձնելու համար հրաւէր է կարդում հայ հասարակութեան «ունևոր» դասին օգնութեան գալու առատաձեռն նուիրատուութիւններով։

Թողնելով հայ հարուստներին իրանց հազարական բուռլիններով օժանդակելը սանատօրիայի վեհ գործին, սրանով վստահանում եմ ձգելու ընդհանուր գանձանակի մէջ և իմ լուման. թող շատ ունեցողները շատ տան, իսկ քիչ ունեցողները քիչ։

Ուստի ուղարկելով 5 ր. խնդրեմ բարեհաճել իմ այդ լուման հասցնել ուր հարկն է։

Գար. ք. Թումանեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ Պ. ԳՐ. ՋԱԼԽՈՒՇԵԱՆԻՆ

Թիֆլիս, 3 մարտի

«Լոյս» շաբաթաթերթի մէջ կարդալով ձեր յօդուածը Ժամհարեան գիւղատնտեսական դպրոցի մասին, որ բացվելու է Գանձակի նահանգում եղբ. Ժամհարեանների նուիրատուութեամբ, ես մնացի ապշած։ Դուք միակ մարդն էիք, որ ամենից աւելի գնահատում էիք հարուստների բարեգործութիւնը. ինչու այժմ հիասթափվեցիք և եղբ. Ժամհարեաններին հերատա էք անում։ Թէև ես չեմ կարդացել հաստատված կանոնադրութիւնը, բայց ինչ տեսակ կանոնադրութիւն որ լինի, երբ բացվում է մի երկրում դպրոց ժողովրդի համար, պէտք է ընդունել նրա օգտակարութիւնը։

Անկասկած լեզուի կողմից, կարելի եղածի չափ նրանք ուշադրութիւն դարձրած կը լինեն, որ հայերէնը եթէ տիրապետող չը լինի, այնու ամենայնիւ կաւանդվի աւելի լաւ, քան մի այլ տեղ։

Գալով աշակերտների թւին կասկած չը կայ որ հայերը շատ կը լինեն։ Ենթադրենք մի վայրկեան, որ նոյն դպրոցում օգտվում են և մեր հարևան ուրիշ ազգի զաւակները. միթէ մենք պէտք է արգելք լինենք և այդ խոշոր նուէրը համարենք անօգուտ և չընդունենք։ Ինչ միտք ունի դաստիարակել, սովորեցնել մէկ ազգի զաւակները, երբ նրան շրջապատող ուրիշ ազգերի զաւակները վայրենի դրութեան մէջ մնալով արգելք պիտի լինեն միասին խաղաղ ապրելու և աշխատելու։ Ունի արդեօք բարոյական իրաւունք որևէ մի անձն յանդիմանելու պ. պ. Ժամհարեաններին կամ մի այլ բարեգործի, թէ ինչու նրանք իրանց գումարները չը նուիրեցին այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում։ Թողէք նուիրողը իր կամքը կատարէ և բանայ այնպիսի հիմնարկութիւն, ինչպէս ինքն է ցանկանում. օգտվողը թող լինեն և հայեր և ուրիշ ազգի զաւակներ, որ կողք կողքի տուած ապրում են և չունին ոչ միջոց, ոչ պատրաստութիւն, որ նոյնը անեն՝ ինչ որ հայը։ Երկրի ժողովուրդը միասին գիւղատնտեսական գիտութիւն ձեռք բերելով և համերաշխ ապրելով՝ մեզ համար աւելի օգտակար է, քան թէ միայնակ հայ ժողովուրդը, որ հազիւ թէ օգտվի իր սովորածից, քանի որ վայրենի հարևանը նախանձոտ աչքով պիտի նայէ, պիտի սպանէ նրա կովը, ձին, այրէ մարագը, արտերը։ Երբ 1906 թւին թուրքերը այրեցին Զանգեզուրում իմ հարուստ պղնձագործարանը, որ հինգ տարվայ ընթացքում հազիւ կարողացել էի մեքենաներ ուղարկել և շինել, այդ միջոցին խանգարութիւն էր, սով էր. ես ուղարկեցի մի քանի վագոն հաց և գրեցի անխտիր բաժանեն հացը կարօտեալներին, լինեն հայեր թէ թուրքեր. թուրքերը զարմանքով և երախտագիտութեամբ էին ընդունում այդ բարիքը, դրանից յետոյ անձնուէր ծառայութիւն էին անում գործարանին։ Թողէք այս անգամ համարենք, որ եղբ. Ժամհարեանները բարեգործութիւն են անում ոչ միայն հայերին, այլ երկրի ժողովրդին. իմ կարծիքով՝ այդ աւելի մեծ բարեգործութիւն է, քան թէ միայն հայերին։ Պ. Ջալխուշեան, ուղղեցէք ձեր սխալ հայեացքը և գնահատեցէք բարեգործին՝ չը քննադատելով նրա կամքը և զգացմունքը։

Ալ. Մելիք-Ազարեան

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկեր. խորհուրդը խնդրում է մեզ տպել, որ իւրն շնորհակալութեամբ ստացել է պ. Դանիէլ Արզումանեանից յօգուտ դպրոցական ֆոնդի 13 ր. 5 կ., որ ժողովել է Ճիաթուրայում Ս. Հայրապետեանի խնջոյքի ժամանակ զանազան անձերից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Թէհրանում հրատարակվող «Ռադ» լրագիրը հրատարակել է մի հետաքրքրական զրոյց, որ եղել է վերջերս Թէհրան մեկնած ռուսական նոր դեսպան Կօրոստովեցի հետ։

Զրոյցը վերաբերում է Ռուսաստանի և Անգլիայի քաղաքականութեանը՝ Պարսկաստանում, ինչպէս և Անդրպարսկական երկաթուղու հարցին։

1907 թւի ռուս-անգլիական համաձայնութիւնը,—ասել է ամենից առաջ Կօրոստովեցը,—ապահովում է Պարսկաստանի ամբողջութիւնը։ Անգլիական և ռուսաց կառավարութիւնները ոչինչ չունեն պարսկական սահմանադրութեան դէմ, որը, սակայն, պէտք է վերաքննվի։ Փոխառութիւն կամ նոր աւանս կը տրվի Պարսկաստանին միմիայն բիւջէի մշակումից և Հնդկա-Եւրոպական երկաթուղու կառուցման կօնցեսիան տալուց յետոյ։ Այդ հարցում Ռուսաստանի և Անգլիայի միջև տակաւին կայացած չէ լիակատար համաձայնութիւն։ Ռուսաստանը կողմնակից է, որ այդ գիծն անցնէ Աստարայից՝ Եզդի վրայով՝ դէպի հնդկական սահմանը, իսկ Անգլիան կողմնակից է Աստարա — Սպահան—Բուշիր—հնդկական սահմանը ուղղութեան։

Ռուսաստանին և Անգլիային հետաքրքրեցնում է նաև,—ասել է ապա դեսպանը,—պարսկական ժանդարմէրիայի ոյժերն աւելացնելու հարցը։ Ռուսաստանը կարծում է, որ այդ ժանդարմէրիան պէտք է միայն պաշտպանէ ճանապարհները, և ոչ թէ իր տեսակի գործող զօրք լինէ։ Այդ հարցի առիթով անգլիական և ռուսական կառավարութիւնների միջև կայանալու են բանակցութիւններ։

Ռուսաց զօրքերը դուրս կը հանվեն Պարսկաստանի հիւսիսային նահանգներից,—շարունակել է Կօրոստովեցը,—որովհետև Ռուսաստանը բոլորովին ի զուր տեղն է ծախսում նրանց պահպանութեան համար տարին 5 միլիոն ռուբլի։ Այդ հարցի նկատմամբ Ռուսաստանում մինիստրութիւնների միջև տարաձայնութիւն չը կայ։

Ինչ վերաբերում է Ատրպատականին, Ռուսաստանը պաշտպանում է տեղական գեներալ-նահանգապետ Սուջա-ուդ-Դովլէին, որովհետև նրան աջողվեց խաղաղեցնել այդ նահանգը։

Ռուս գաղթականների երևալը Պարսկաստանի հիւսիսային նահանգներում քաղաքական նպատակ չունի,—ասել է նա,—և չը պէտք է վախեցնէ պարսիկներին։

Ներքին պարսկական գործերի մասին Կօրոստովեցը ասել է հետևեալը.

— Նախկին շահ Մահմէդ-Ալին վերջերս Պետերբուրգում օգնութիւն խնդրեց, կամենալով նոր արշաւանքի ձեռնարկել դէպի Պարսկաստան։ Սակայն այդ օգնութիւնը մերժվեց նրան ամենակտրուկ կերպով։ Ռուսաստանը, առհասարակ, հրաժարվում է պաշտպանել պարսիկ բէկակցիօնէրներին, որոնք իրանց նուիրելով նրա հովանաւորութեանը՝ հրաժարվում են վճարել պարսից կառավարութեանը իրանց ստացուածքից հասանելիք տուրքերը։ Ռուսաստանը միանգամայն բարեացակամօրէն կը վերաբերվի դէպի անհրաժեշտ բարենորոգումները, որոնք հետամուտ են վերածնելու Պարսկաստանը և ամրապնդելու նրա կառավարութիւնը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 20 փետրվարի

Անցան Բարեկենդանի օրերն ուրախ Թաւրիզի համար։ Փետրվարի 13-ին, Վարդանանց տօնի առիթով հանդիսակատարութիւններ տեղի ունեցան երկթաղի—Ղալայի և Լիլավայի—ծխ. ուսումնարաններում, պատարագի արարողութիւնից յետոյ, աշակերտ-աշակերտուհիների և խուռն հասարակութեան ներկայութեամբ։ Արտասանվեցին ճառեր տօնի պատմական մեծ նշանակութեան մասին, երգվեցին քառաձայն երգեր, սոլօ՝ ջութակի ընկերակցութեամբ, և աշակերտութեան կողմից արտասանվեցին պատշաճ ոտանաւորներ։

Թեմակալ Ներսէս վ. Մելիք-Թանգեան Ղալայում կատարված հանդէսը փակեց մի քարոզով, շեշտելով այն հանգամանքի վրա, որ հայ ժողովրդի պատմական կեանքում Վարդանանց պատերազմի շարժառիթը ոչ թէ տնտեսական, աշխարհակալական կամ այլ նիւթական ձգտումն էր, այլ զուտ գաղափարական, պահպանելու նպատակով հայ ազգի գոյութիւնը օտար ոտնձգութիւնների հանդէպ։

Վարդանանց պատերազմի յիշատակը սերունդներ է ոգևորել և դեռ երկար կը կատարէ իր դերը, եթէ ամուր պահպանենք աւանդական տօնակատարութիւնը հայկական դպրոցներում, հասարակութեան ներկայութեամբ ամեն տարի։

Երկու ուսումնարաններից էլ հասարակութիւնը ցրվեց լաւ զուարթ տպաւորութեամբ։

Նոյն օրը երեկոյեան հայոց առաջնորդարանի կողմից ընթրիքի էին հրաւիրվել ռուսաց նորեկ հիւպատոս պ. Օրլով 2—3 պաշտօնեաների հետ իրանց ամուսիններով, որտեղ ներկայ էին նաև Թեմական խորհրդի անդամները և մի քանի յայտնի հայեր նոյնպէս իրանց ամուսիններով։

Ընթրիքն անցաւ շատ ուրախ, խօսվեցին բաժակաճառեր, եղան մաղթանքներ Նորին Կայսերական Մեծութեան ռուսաց Կայսրի կենաց համար և ազգիս Վեհափառ Հայրապետի արեշատութեան համար։

Գեներալ-հիւպատոս Օրլով արդէն յայտնի է իր բարի տրամադրութիւններով դէպի հայ ժողովրդի շահերը։ Գիշերը ժամը 12-ի մօտ մեկնեցին հիւրերը ուրախ տրամադրութեամբ։

Ամսիս 19-ին Թէհրանից Թաւրիզ հասաւ գերմանական հիւպատոս պ. Ֆօն-Լինդէն։ Քաղաքից դուրս Աջի գետի կամուրջի մօտ կառավարութեան կողմից պատրաստել էին վրաններ և ընդունելութիւն։ Չը նայած օրն անձրևոտ էր, սակայն ողջ գերմանական կօլօնիան և բաւական թւով թուրքերը դիմաւորել էին։ Երեկոյեան գերմանական կլուբում կար երաժշտութիւն և հրավառութիւն։

Շուտով կը հասնեն հիւպատոսարանի միւս պաշտօնեաները, որոնք, ըստ բարձրագոյն կարգադրութեան, պիտի լինեն միևնոյն ժամանակ առևտրա-արդիւնաբերութեան, հանքային և այլ անհրաժեշտ ձեռնարկութեանց համար անձնաւորութիւններ։

Գերմանական և ռուսական մրցութիւնք ակներև են. դեռ ուշ չէ, որ ռուս և հայ արդիւնագործող դրամատէրերը փութան ձեռներէցութեան ոգի ցոյց տալու, մանաւանդ երկաթուղու շինութիւնը վերջացնելուց յետոյ։

Հայկազուն

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 7 փետրուար

◆ Վեհափառ կաթողիկոսը կը շարունակէ մնալ Ադանա։ Ադանայի առաջնորդական խնդիրը դեռ կը մնայ անորոշ և հաւանօրէն ալ լուծուելիք չունի։

Բաբգէն եպիսկոպոսը, որ Այնթապ էր վերջերս, մերժած ըլլալով Ադանայի առաջնորդութիւնը, կը պատրաստուի եղեր Եւրոպա երթալ և աստուածաբանութեան դոկտորա անցնիլ։

Այս հիւանդութիւնն ալ Կովկասէն մեր մէջ վարակուեցաւ։ Թիւրքահայ եկեղեցականութիւնը կրնա՞ր ներել արդարև, որ ռուսահայերը աստուածաբան-համալսարանական մենաշնորհը պահեն։

Եւ ահա մեր բարեկամ Շահէ ծ. վարդապետը այն միտքովը մինչև Կոլոմբոսի գտած երկիրը շունչ կառնէ, Պալաքեան վարդապետը Գերմանիա և Բաբգէն եպ. ալ, կարելի է, Ֆրանսա, ու այսպէս քանի մը տարիէն աստուածաբան-համալսարանականներու ալբոմը մենք պիտի առնենք Կովկասէն։

Եւ ասդին Ադանայի, Կեսիրէի, Վանայ, Դիարբեքիրի և այլն, և այլն նման տեղերը առաջնորդցու չեն գտներ։

Չե՞նք յառաջդիմեր։

◆ Անցեալները Կիլիկիա եկաւ Միութեան կրթական ընդհ. տեսուչ պրոֆ. Յովհ. Յակոբեան։ Կիլիկիոյ շրջանակի ընդհ. տեսուչին հետ պրոֆեսորը հետզհետէ այցելեց Մերսին, Տարսոն, Ադանա, ուր տեսակցեցաւ վեհ. կաթողիկոսին հետ և ապա, ժամանակ մը քննական կարգ մը գործերով Դէօրթ-Եօլ «Ֆելեկեան» որբանոցը մնալէն ետք, Եգիպտոս մեկնեցաւ, կրթական կարգադրութեանց մասին Ընդհ. Միութեան հետ բանակցելու համար։

◆ Երէկ տեղս անցաւ՝ իսլամ ժողովուրդին խանդավառութեան մէջ՝ Ջելալէդդին Նուրի-բէյ օսմանեան օդանաւով մը։

Ամբողջ քաղաքը աչք կտրած էր այն րոպէին այդ նորօրինակ թռչունին համար։ Առասպելներուն չափ ու սահման չկար։

Այնու ամենայնիւ նշանակալից են թիւրքական արթնումին այս և նմանօրինակ նշանները....

Դիտող

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Երզրում, 17 փետր.

Հինգշաբթի, Վարդանանց տօնի առթիւ հանդէս էր կազմակերպուած Սանասարեան դպրոցի սրահին մէջ։

Հասարակութենէն ոչ ոք էր յաճախած այդ հանդէսը, այնպէս որ կազմակերպիչները ստիպուած էին հաշտուիլ այն հանգամանքի հետ, որ այժմ արդէն ոչ ոք կուզէ զիրենք լսել։ Հանդէսը չը կայացաւ...

Ժողովուրդի այդ լուռ ցոյցը պերճախօս դաս մըն էր այն մարդկանց ու կազմակերպութեան համար, որոնք դեռ ասկէ 5—6 տարի առաջ այնքան մեծ և, կրնամ ըսել, կոյր համակրութիւն ու սէր կը վայելէին մեր հասարակութեան մէջ։ Եւ հիմա՝ իրենց սարքած այսօրուան հանդէսները համեմատութեան դնելով այն ժամանակուաններուն հետ, կը տեսնենք, թէ ի՛նչ ահռելի անկում մը ունեցած է ժողովուրդին համակրանքն անցեալին մէջ վայելած ու անոր դրամն անխնայօրէն շահագործող կազմակերպութիւնը։

Վերջերս տեղական իթթիհատական «Ալ-Բայրաք» թերթը առանձնապէս կը հետաքրքրուի «Մշակի» Թաւրիզի թղթակցութիւններով և ամեն №-ի մէջ ինքզինքն արդարացնելու, աւելի շուտ՝ անմեղ հռչակելու ջանքեր չի խնայեր։